ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «15» օգոստոսի 2024 թ.

ՀՐԱՄԱՆ №199-Ա/Ք

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 2024 թվականի մայիսի 13-ի N 149-Ա/Ք հրամանի N 1 հավելվածով հաստատված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի աշխատակարգի 4-րդ, 7-րդ և 8-րդ կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2024 թվականի օգոստոսի 21-ին՝ ժամը 15:00-ին հրավիրել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից աշխատանքային խմբի նիստ՝ հետևյալ օրակարգով.

1) գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու՝ բուհերից և գիտական կազմակերպություններից ներկայացված հայտերի գնահատում,

2) արշավախումբ կազմակերպելու՝ գիտական կազմակերպություններից ներկայացված գրությունների քննարկում,

3) գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման՝ բուհերից և գիտական կազմակերպություններից ներկայացված հայտերի գնահատում,

4) գործուղվող գիտաշխատողների գիտական գործուղման ծախսերը հայտատու կազմակերպություններին փոխհատուցելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկության ներկայացում,

5) արշավախումբ կազմակերպելու համար ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկության ներկայացում,

6) գիտական միջոցառումների և երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման հայտերը

ֆինանսավորման երաշխավորելու և ֆինանսավորման ծավալների մասին առաջարկության ներկայացում:

2. Նիստը նախագահելը և վարելը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Հարություն Սարգսյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ